

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**ԱՆՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ.**

( Յարուհանչելի ):

ԽԲ.

Խոյից գիշելը. Հին Հաղոցի գիշելը. Խղանքի անսանով լեռնա-  
ձայռը և նոր այրը. Ճառայար գիշելը. Թառարաց լուխտը. Խաչի  
գիշելը. Նորա և կեղացին. Ուհանի պարմունիննը. Աղջար գիշելը. Գնիղարանի ս-իստարեցին. Քառակախաղաց սարը. Հասուշ գիշելը.  
Կղառը. Զընըւաղացին. Թաճաշաղ գիշելը առերախները. Քարիսիայ  
վանիչ շուշը:

Դարավագեաղի հեռաւոր տեղերից ես կրկին իջայ Շարուրի  
դաշտավայրը կրկին կանգնած եմ Արփաչայի վրփրադէզ ալիք-  
ների մօտ՝ հենց այն ձորի բերանում: ուր այդ գետն աղատուե-  
լով ժայռոտ ափերի ճնշումից՝ դուրս է գտի Շարուրի ընդար-  
ձակ գաշտը. Ալիքայ նորաշեն հայագնակ գիւղի մօտ: Գետի  
ձախակինեայ քարունեղ ճանապարհով ես գնում եմ դէպի վեր,  
գետի հոռանքին հակառակ: Քանիցս անգամ տեսել եմ այդ  
ցեխուո՝ արագահոտ գետը, նորա ափերը զարդարող շարեշար  
փշտունի ծառերը, չալթուկների բազմածեփ մարգերը իւր-  
եանց միջի բազմաթիւ, բիւրաւոր գորտերով, որոնք ամեն ան-  
գամ իւլացնում են անցորդի ականջը իւրեանց կուայ. կուայ-  
ներով: Քանիցս անգտմ այդ տեղ ենթարկուած եմ ձմեռային  
սառը քեաբեր քամիներին և կամ ամառային շնչասպառ շոքե-  
րին կամ միլիոնաւոր մոծակների աննահանջ յարձակման:  
Բայց լնթերցողներին ի՞նչ փոյթ, նորանց ի՞նչ պէտք են այդ  
գժուտութիւնները, նորանց հարկաւոր են ուշադրութիւն  
գրաւող հետաքրքիր նիւթեր: Այս է և իմ նպատակս, այս է և  
իմ ցանկութիւնս որ կարելոյն չափ գոհացնեմ ընթերցազի բազ-  
մատեսակ պահանջը այն երկրի վերաբերութեամբ, ուր նա  
երեակայթեամբ ճանապարհորդ ում է ինձ հետ:

Այսպէս ուրեմն. Ես նորից մտնում եմ Արփաչայի խոր աւազանի մէջ, նորից շարունակում եմ ճանապարհս և ահա աջ կողմում; գետի ձախ ափում լեռները ճեղքում, հեռանում են միմեանցից և բանում են առաջս բաւականաչափ նեղ, բայց երկայն հովիտ չոր և ցամաք: Այդ տեղ չկայ կանաչ խոտ, չկայ ջրի կաթիլ, չկայ մի թուփ, այլ կան բազմաթիւ քարեր: աւազ և ջրի հոսանքի տեղ: Անձրեից մօտակայ լեռներում կազմուող գետը այդ տեղից հոսում է դէպի Արփաչայ և իւր յետեկց թողնումէ քար, խիճ և աւազ:

Հինգ կամ վեց վերսոտ Արփաչայից հեռացած՝ յիշեսլ հովտով ասուինանաբար բարձրացած, ես հասնում եմ մի տաճկաբնակ գիւղ Եայէն անունով, որ գրած է լեռներով շրջապատուած մի բաժակի մէջ: Նարուրի տօթից երկնքի շոքից նիհարացած՝ թալկացած՝ ես զովացնում եմ ծարաւս այն օառնորակ աղբիւրից որ բղխում է գիւղի մէջ քարի ահագին բեկորի տակ: Բացի այդ՝ կայ և մի այլ առուտակ տարերի աղբիւրից կազմուած, որով կենդանութիւն են ստանում Եայիջի այգիները: Առուտակն իւր սակառութեան պատճառով չէ հասնում Արփաչային: Գիւղի մէջ բլուրի վերայ կառուցած է ցխապատ ամրոց իրեւ պատսպարան Դարաբաղի թուրքերի երբեմն ասպատակութիւններից, որոնք յաճախ պատահում էին պարսից և օսմանցոց կոթսագարձ կոիւների ժամանակ:

Եայիջին Դարաբագեազի բազմամարդ գիւղերից մինն է: Նա ունի 2000 բնակիչ: Այժմ նա նշանաւոր է իւր բազմաթիւ էշերով: Արգարե Դարաբագեազում կամ Նարուրում ոչ մի տեղ չկան այնքան էշեր, արքան Եայիջում, մինչեւ անգամ, ազում են, պետական կամ հասարակական հարկը բաժանում են ունեցած էշերի թուսով: Այլ գիւղերում բեռը, խուրձը և այլ ճանրութիւնները կրում են դիցուք եզներով, գոյնեշներով, ձիերով, սալերով, իսկ Եայիջում հեղութ խոնարհ էշերով:

Այժմեսն Եայիջին չունի ոչ մի հայկական նշոյլ, ոչ մի յիշատակ, նօպէնը\*) նուաստօրէն կարծում է, որ Եայիջին

(\*) Шопен, истор. пат. состояніє аրք. областки ст. 279.

պէտք է լինի Խորենացու յիշած Մարակերտն Շարուրայ դաշտում։ Յայտնի բան է, Շոպէնը այդպէս է կարծում այն յոյսով՝ որ գուք նորանից չպահանջէք ոչ մի պատմական ապացոյց։ Իսկ ես կարծում եմ որ նա պէտք է լինի Հողոցի գիւղը, Յովսէփի կաթուզիկոսի ծննդավայրը, այն Յովսէփի, որ այնքան նշանաւոր գեր ունեցաւ Վարդանանց պատերազմի ժամանակ։ Հինգերորդ դարում։ « իսկ զաթոռ եպիսկոպոսապետութեանն ի տեղապահութեամբ յաջորդեաց հրամանաւ երանելոյն Մեսրոպայ՝ նորին աշակերտ Յովսէփի քահանայ ի Վայոյ ձորոյ, ի Խողոցիմ գեղջէ»<sup>(1)</sup>)։ Առւրբն Յովսէփի ի Վայոյ ձորոյ՝ ի գեղջէ Հողոցմանց<sup>(2)</sup>),

Եմ կարծիքս հիմնում եմ Օրբելեան Սմբատ իշխանի մի յայտնի արձանագրութեան խօսքերի վերայ։ Յիշեալ իշխանը 710 հայոց կամ 1261 Քրիստոսի թուականին Ամազուի նորավանքում թողել է մի արձանագրութիւն, որի մէջ կայ և հետեւեալ պարբերութիւնը, « Յետ այսմ և տուպք զԱզատ գիւղն իւր ամէն սահմանովն ըրջակայ լերամբ և դաշտով, սկսեալ ի բարձր գիտաւոր սարէն, որ Քուատիախաղաց կոչի մինչի յերուանն Հողոցմոց և ձաւաձոր և ի գլուխն Ակոռւոյ<sup>(3)</sup>։ Ով ի մօտոյ ծանօթ է արձանագրութեան յիշած աշխարհագրական կէտերին, նորա համար պարզ է, որ Քուատիախաղաց գիտաւոր բարձր սարը դրած է այժմեան Խաչիկ գիւղի գլխին՝ գէպի արևելք, որ այժմ բառացի թարգմանութեամբ թուրքերի և հայերի բերանում կոչվում է Ղաւաղանակուղ։ ձաւաձոր գիւղը, որ այժմ կոչվում է Զղագիւր, զետեղուած է մի ձորակում, Եայիջի սահմանում։ իսկ Ակոռի, որ այժմ կրում է Ախուռոի անունը, թրքաբնակ է և դրած է եայիջից հարաւ և Խաչիկից արևմուտ, լեռնագօտու ստորտում ուր անմիջապէս սկսում է Շարուրի դաշտի մի մասը։

Ուրեմն Սմբատ իշխանի նուիրած Ազատ գիւղի սահմանա-

(1) Խորենացի գերք Գ. գլ. 67.

(2) Եղիշէ (Մոսկուայ) երես 361.

(3) Օրբել.Պատմ. Խաչանգին Սիսական գլ. 317.

գիծը այժմ դրականապէս որոշ են, այն է Քուռակախաղաց (Ղուլան օյնաղ) սարը, ճաւաձոր գիւղը և Ակոռւոյ գլուխիր։ Մնում է անորոշ և անյայտ - Հողոցիմը, որ բայ արձանագրութեան պէտք է լինի Ճաւաձորի և Ակոռւոյ կամ Զղազիւրի և Ախուռի սահմաններում։ Հետախոյզը Հողոցիմի տեղը պէտք է որոնէ այդ տեղում, այդ տարածութեան վերայ։ Հողոցիմի տեղը գտնելը եղել է ինձ տանջող հարցերից մինր։ Ամրող Դարտուագեագում քանի տեղ որոնած եմ, քանիցս անգամ հարց ու փորձ արած եմ Հողոցիմի մասին, սակայն իմ ջանքո ոչ միայն ապարդիւն է անցած, այլ և այդպիսի անուն անգամ չէ լսուած ժողովրդի մէջ։ Երեւում է որ Հողոցիմը գիւղը վաղուց անհետացած է։

Հողոցիմի տեղը որոշելու իրրե միակ պատմական փաստ և տպացոյց ունենալով Սմբատ իշխանի յիշեալ արձանագրութիւնը, ես շատ անգամ հետախուզել եմ բոլոր գաշտերը և սորերը Ճաւաձորի և Ակոռի, նոյն և Խաչիկ գիւղի սահմաններում, բայց ոչ մի կէտում չեմ գտած յարմար գիւղատեղի կամ աւերակներ, ուր յայտնագործուէր Հողոցիմը։ Միակ յարմարին տեղը այժմեան նայի՞ն է, որի Հողոցիմ լինելը տռաւել քանի հաւանական է։ Հողոցիմ գիւղը եղել է ուրեմն Ամրատ իշխանի օրով, 1261 թուականին, իսկ Վայոց ձորի աշխարհագրութիւնից նորա անհետանալու միջոցը մեզ անյայտ է։ Էնդունելով որ նայի՞ն Հողոցիմն է, դժուար չէ ենթադրել որ վերջին կոչումը տեղական թուրքերի բարբառով կարող էր աղջատուել, փոխուել և դառնալ նայի՞ի, ինչպէս Աղաւնուձորը գարձել է Այնազիւր, Արետեսը - Այսասի, Եղէգնիօր - Ալագեազ, Ճաւաձորը - Զղազիւր և այլն։

Առանց ապացոյցի, առանց պատմական փաստի՝ Արքեպիսկոպոս Զալալեանի գիւղը զետեղում է Հողոցիմը գիւղը Մարտիրոս գիւղից գէպի արեւմուտ, այժմեան հայաբնակ Կոռագիլ գիւղի տեղ\*): Բաւական է աչքի առաջ ունենալ Սմբատ իշ-

(\*) Զալալ. Ճանապ. Հ. Բ. երես. 202.

188 օնդ (առաջանակ) մշկը (1)

189 օնդ (առաջանակ) մշկը (2)

190 օնդ (առաջանակ) մշկը (3)

խանի արձանագրութիւնը, որպէս զի անհիմն համարսւի Զալալեանի գրքի թիւր կարծիքը։ Սորա մասին ասածս բաւական է, այժմ այլ բան։

—Դու շատ հետաքրքիր և ամէն բանի մասին հարց ու փորձ անող մարդ ես, ասաց ինձ մի անգամ Եայիջում իւր տանը Յիւսէին բէգը, չե՞ս կամենալ արդեօք տեսնել մեր այրի հրաշալիք։

—Նատ կցանկայի, բայց ի՞նչ այր և ի՞նչ հրաշալիք, հարցրի ես։

—Այն ժայռապատ լերան մէջ, ցոյց տուեց մատով Յիւսէին բէգը, մութ և խոր այրում կան փայլուն ապակէ սիւներ, տներ, որ մուի լոյսից հազար տեսակ ցող են արձակում։

Ի՞նչ կասկած, որ հետաքրքրութիւնս շարժուած ես իսկոյն որոշեցի գնալ և տեսնել այրը։ Վերջինը երկու վերսատչափ հեռու է գիւղից։ Յիւսէին բէգը զգուշացրեց որ ճանուարհր քարոտ է և խիստ դժուար, ուրեմն հարկաւոր կլինին ձիանք, այրի մէջ մութ է, պէտք է ունենալ մոմեր և ժայռը բարձրանալու համար առաւել յարմար է բորիկ ոտերով։ Զիանքը պատրաստ էին, նոյնպէս և բնաճարպի մոմերը։ Մեղ ուղեկցեցին մինչև 20 երիտասարդ թուրքեր։ Լեառը, որի մէջ այրն է, Եայիջի գիւղի հիւսիսային կողմից պատող շղթայի մի մասն է և կոչվում է Խղանգի։ Խղանգին ժայռակազմ է, բարձր, ճակաաը մերկ, իսկ գագաթը խոտաւէտ արօտատեղի։ Մեր հետեակ ուղեկիցները իրար յետելից ճանապարհ ընկան դէպի Խղանգի։ Ես և Յիւսէին բէգը հետեւում էինք նոցա։

Կանգնեցինք Խղանգի ստորոտում նախապատրաստութիւն տեսնելու, իսկ ուղեկից թուրքերի մի մասը այծեամի ճարպիկութեամբ արդէն բարձրացել էին մինչև այրի բերանը։ Իջայ ձիուց, կօշիկներս հանեցի և օգնութեամբ երկու թուրքի, որոնց մինը առաջս և միւսը յետելիցս, կամաց կամաց, չորքոտանու չնման, ժայռի ճակատի ուռուցիկ մասերը մատերի ծայրերով բռնելով, աջ և ձախ ուղղութեամբ բարձրանում էինք։ Խնձանից յետոյ գալիս էր Յուսէին բէգը և մերթ զուարճանում էր որ իմ օգնական թուրքերը, տեղ

տեղ, առաջինը ձեռքիցս էր քաշում՝ գեպի վեր, իսկ յիտեինը ձեռքով բարձրացնում էր։ Արևի ճառագայթների տակ, քրորինը հոսանքով պատաժ՝ վերջապէս հասայ մի փոքրիկ տափարակ տեղ, ուր երկու երեք մարդ հաղիւ կարող են կանգնել և ուր բացւումէ այրի նեղ բերանը, կանգ տռայ, շունչ քաշեցի, նայեցի գեպի ստորոտը, որ մեզանից ցածր էր մինչև տառնեհինգ սաժէն, նայեցի վեր, ուր սարը կանգնել էր մեր գլխին, նայեցի հեռու, նայինին իւր բոլոր տներսվ, փողոցներով, պարտէզներով և այդիներով երեւում էր առաջս։ Այրի միջից, ուր արդէն թափառում էր ուղեկիցներիս մի մասը, լուսում էին երգերի խուլ ձայներ, Կօշիկներս նորից հագայ, զրահաւորուեցինք վառած մոմերով և մտանք ներս։

Այրի բերանը այնքան նեղ է՝ որ մտնելը կատարւում էր կուղէկուզ, իսկ անցնելուց յետոյ արդէն և լայնանում է և բարձրանում, ուր աղատօրէն կարելի է շրջել, Ունի մի գլխուուր հարթ ճանապարհ, երկարութեամբ մօտ 200 քայլ։ Սորան խառնւում էին կողմնակի մի քանի ճանապարհներ իւրեանց ծայրերի մեծ կամ փոքր խորշերով։ Տեղ տեղ բացւում էին հարեր։ Այրի պատերը, յատակը և առատուազը մերկ քարից էին կազմիւած։ Այրը բնական էր, արհեստական ոչինչ չունէր։ Եատ զգալի էր երբ արտաքին ջզբից յետոյ մտանք սառը և մասամբ խոնաւ այրի մէջ։ Քանի հեռանում էի բերանից, որ արդէն արտաքին լոյսը այլ ևս չէր երեւում, այնքան առաւել մթնում էր շուրջաւ, սաւնանում էր օդը և ինձ կտրուած էի համարում ամիսող աշխարհից լեռնաժայոի սրտի մէջ։ Թուրքերի երգերի ձայները շարունակ լսուում էին։ Այդ թուրքերը իբրև քաջածանօթ այրին, ցրուած էին բոլոր խորշերում։ Դվամաւոր ճանապարհի ծայրում առաջարկեցին իջնել սաորլեռնեայ բիւրեղային ապարանքը տեսնելու։

Այդ տեղ այրը կորցնում էր իւր հորիզոնական ուղղութիւնը և խիստ թեքւում էր գեպի վայր, մասամբ ևս նեղանում էր։ Օգնական թուրքերը նորից սկսեցին գործ դնել իւրեանց ձեռները առաջից գեմ տալով և յետելցս փեշերս բռնելով՝ որպէս զի չուրուիմ . . . ։ Հասայ մի այնպիսի տեղ,

ուր այրը թէ և շատ լայնանում էր, բայց առաստաղից կախուած և յատակից բարձրացող շարերար սիւներից, նորա ծառալը այնքան էր նեղանում և նեղ ու ծուռ անցքեր ստեղծում, որ ես և թուրքերը շարժւում էինք արդէն կոտրտուած և փշուր փշուր եղած սիւների վերայ: Սակայն մեզանից ցած կար էլի այրի ուղղահայեաց և կամ թեք շարունակութիւնը: Նթէ յանկարծ մեր վառած մոմերը հանգչեն . . . ի՞նչ կանենք մթնում, մոածում էի ես . . . բայց միսիթարւում էի որ թուրքերից շատերը պտտւում էին մթնում, առանց արհեստական լոյսի:

Սկսեցի զննել Եայիջեցւոց հրաշալիքը, բիւրեղեայ պալատը բիւրեղեայ սիւներով: Արդարե բնութիւնը այնպէս էր կարգադրել, որ այրի առաստաղից կախուած էին բազմաթիւ հաստ կամ բարակ սիւներ կարմրաշէկ գոյնով: Մոքա միւս, վայրի ծայրով կամ անմիջապէս հասնում էին յատակին կամ ազատ կախուած էին օդի մէջ: Նատ սիւներ ես անմիջապէս յատակից կոնածեւ բարձրանում էին դէպի առաստաղը, առանց նորան կպչելու: Նատ տեղ առաստաղից կախուած էին սպիտակ ողկոյզներ հազողի նման հատիկներով: Վերջինները դեռ չէին ծածկուած դրսից կարմրաշէկ գունով, այլ բիւրեղանմտն փայլ ունէին և գեղեցիկ կերպով անդրադարձնում մոմերի թոյլ ճառագայթները: Ուղեկից թուրքերը անխնայ կոտրտում էին այդ սիւները, որոնց կազմութեան վերայ բնութիւնը գործադրել էր շատ տարիներ: Բազմաթիւ բեկորները մեր ոտաց տակ ապացոյց էին որ այն թուրքերը իւրաքանչիւր մտնելու ժամանակ սովորաբար կոտրատել են:

Միւները տեսնելուն պէս ասացի որ նոքա հանկարանական լեզուով կոչւում են սպալակուր և սպալակմէտ: Բայց ուղեկից և ունկնդիր թուրքերը այդ երկու բառից ոչինչ չհասկացան: ուստի այդ մթին աշխարհում, լերան խորքերում վայրենի ունկնդիրներիս բացադրեցի թէ ինչպէս նոքա կազմեում են անձրեային կաթիլների մէջ լուծուած աղերից լերան դատարկ տեղերում կամ այրերում, թէ ի՞նչ է պատճառը որ նոքա այդպիսի տեղերում են գոյանում, թէ ի՞նչի՞ մի դէպիքում

կազմւում է ստալակտիտ և միւս դէպքում — ստալագմիտ: Վերջապէս որոշեցինք դուրս գալ մթին աշխարհից կանիքի վերցնելով մեզ հետ հանքի լաւ և բազմաձեռ մասերից: Աւդեկիցներո մեծ քանակութեամբ ծանրաբեռնուած հետեւումէին ինձ դէպի այրի բերանը: Ոչ, ի՞նչքան լաւ է լոյս աշխարհը... ի՞նչքան կենդանաբար է արտաքին օդը...: Այրից դուրս գալով նորից շնչեցի ազատ, նորից ընկաւ վրայիցս կոմս Մոնակ Քրիստոի բնակարանի ծանր ճնշումը:

Այրի բերանում ստալակտիտի ահագին պաշտից ջոկեցի այնքան, որքան կարող էր տանել մի ձի և մի խուրջին: Ընտրեալը յանձնելով ուղեկիցներիս, ինքս առաջինը իջայ լերան ստորոտը, բայց առաւել դժուարութեամբ քան բարձրանալու ժամանակ: Հետաքրքիր էր նայել ստորոտից վեր՝ մի գեղեցիկ տեսարանի վերայ, Թուրք երիտասարդները ծուռ ու մուռ ճանապարհով ժայռից կամաց կամաց իջնում էին իրար յետեւից և նոցանից մինը տերին յարմաք երգ էր երգում քաղցր եղանակով: Մի այլ տպաւորութիւն էի զգում՝ այդ տեսարանի վերայ... վայրենի տեղ, բարձր սար, մերկ ժայռ, երգի արձագանք, մարդայծեամների շարեշար ազատ իջնելը... և սոյնանման երեւոյթների տպաւորութեան ազդեցութիւնը անմիջապէս կզգայ նա՝ ով երբ և իցէ ճանապարհորդել է.... Այժմ այքիս առաջ՝ սեղանս զարդարող նայիջից վերցրած ստալակտիտների և ստալագմիտների գեղեցիկ օրինակները, ուրիշ հանքերի հետ, մշտական քաղցր յիշատակ են իմ ճանապարհորդութեան Դարալագեազում: Սոյն ստալակտիտի մի հաստ և ծանրակշիռ բեկոր, միւս արծաթեայ և այլ հանքերի հետ, 1876 թուին իմ ձեռքով բերած և նուիրած Գէորգեան ճեմարանին, պէտք է մնալիս լինի և այժմ (գուցէ առանց վերնագրի) յիշեալ ճեմարանի թանգարանում:

Խզանգի լերան հիւսիսային ստորոտում մի խոր ձորի մէջ ծառազարդ տափարակի վերայ դրած է մի թրքաբնակ փոքրիկ գիւղ Զուզէ-ը անունով: Նա շինած է հայկական աւերակների վերայ, որսիսի գիւղ ծդ դարում կոչվում էր ձաւաձոր, ինչպէս յիշատակած է վերը Կշիան Սմբատի արձանագրութեան

մէջ։ Սուրբ Սարգիս անունով փոքրիկ հասարակաշէն եկեղեցու մնացորդը նոյնպէս և մի քանի խաչքարինք կենդանի ապացոյց են երբեմն հայ բնակութեան։ Ճաւաձոր գիւղի ձորով խիտ առ խիտ թփերի տակով հսում է մինչեւ Արփաչայ մի պարզ առուակ։ որ իւր սկիզբն վերցնում է Քարկոփայ վաճքի շրջակայքից։ Արնէտ գիւղի աւերակներից։ Ճաւաձոր Դարագեազի հայերի լեզուով նշանակում է իւմ, որով խուրց են կապում։ Գուցէ սորանից է ծագել հին գիւղի անունը։ Խաչիկեցիք և այլ հայեր Զզազիւրին երբէմն Ճաւաձոր են կոչում։ իսկ վարդավառին ուխտ են գնում Ճաւաձորի Սուրբ Սարգիս եկեղեցուն։

Խայիջուն, իսկ երբեմն Յովսէփ Եպիսկոպոսապետի ծննդավայրին հրաժարական տալով բարձրացայ դէպի արևելք, դէպի հայաբնակ Խայիկ գիւղը։ Խայիջու գլխին, ճանապարհի եղրում բզիսում է մի յորդառասա աղբիւր և հսում է դէպի Խայիջու այգիները։ Աղբիւրից բաւականաչափ անցած՝ ահա մեր առաջ բացւում է լայն բարձրադիր դաշտ կանաչագոյն արտերով ծածկուած։ Դաշտից հարաւ սարի բարձրութիւն է, որի հարաւային ստորոտում Ակոռի կամ Ախուռի գիւղն է, ուրեմն յիշեալ բարձրութիւնը Սմբատ իշխանի արձանադրութեան մէջ ասած Ակոռի գլուխն է։ Դաշտի արևելքը՝ Խայիկ գիւղն է, իսկ դէպի հիւսիս Քարկոփայ վաճքն է և այն առուակի ձորն է, որ Քարկոփից հսում է դէպի Ճաւաձոր։ Դաշտի մէջ տեղ բարձրանում է մի բլրակ, որ կրում է Թառացայ Շախու անունը և որպիսի անուան ծագումը ես չգիտեմ։

Յաւարայ թախտի դաշտը, ուր տատանւում են Խայիկեցոց արտերը, երբեմն եղել է այգիների վայր։ Դաշտի արևելեան եղրում կան առանձին տնակների փլատակներ, վարելուց դուրս են գալի գետնի տակից վազի, ծիրանի և այլ պտղատու ծառերի փթած արմատներ։ Իսկ հիւսիսային եղրում այժմ էլ կտեսնէք մի ահագին ամբողջ քարից փորած հնձան հաղող ճմբելու համար։ Խաչիկեցիք Զարդել՝ տարել են այդ հնձանի կէս մասը գիւղի աղբիւրի առաջ աւազան շինելու համար։ Հարսւային եղրից իջնում է դէպի Ակոռի գիւղը մի

Ճարակ, որի վերին մտսում, Խաչիկից ոչ հեռու, երեսում է հին գիւղատեղի Մատհայ անունով, կան և հին ջրաղացատեղիներ քարէ նաւերով։ Թալարայ թախտից արեւելք՝ սարի լանջով ես բարձրացայ և կէս ժամից արդէն հասած եմ Խաչիկ։

Խաչիկը ունի բարձր դիրք և նայում է Արաքոի, Շարուրի, Վեդի բառարի և մասիսների վերայ։ Շարուր - Դարալազետղ գաւառի ծառայող աստիճանաւորները շատ անգամ ընտրում են այս տեղ իւրեանց համար ամարանոց։ Բնակիչները Դարալազետղի բնիկ հայիր են, 360 արական և 325 իգական հոգի։ Նոր սկսել են ծառեր տնկել գիւղի շուրջը, սոկայն նոքա, եթէ հասկանային, վաղուց կարող էին բազմացնել ծառերի շարքերը, շնորհիւ ջրի առատութեան։ Խաչիկեցիք ուսումնասէր մարդիկ են։ Նոքա շատ վաղուց ունեցել են ձգառում գէպի ուսումը և միշտ ջանք են գործ գրած ծխական դպրոց պահել գիւղում, որի համար կառուցած ունին մի շինութիւն երկու լնդարձակ սենեակից։ Խաչիկու դպրոցական գործի պատմութեան մանրամասնութիւնը արձանագրուած է մի այլ աշխատութեան մէջ\*):

Խաչիկի ծխական եկեղեցին հասարակ քարից վաղուց շինած է ինչպէս ցոյց է տալի նորա միտկ հարաւային դրան վերի արձանագրութիւնը, Խարխուլ, փայտածածկ առաստաղը հաղիւ կարողանում է պահպանուել բազմաթիւ փայտէ սիւների վերայ. և այսպիսի մի շինութիւն Զալալեանի գրքի մէջ (Հ. Բ. երես 165) կոչվում է ծծ և հոյակապ։ Արձանագրութեան պատճէնը այս է «ի թվ. Խձլ. 1130» շինեցաւ սուրբ եկեղեցիս անուամբ Աստուածածին. ի թագաւորութեան Շահ Սուլեմանին, հայրապետութեան Տեառն Յակորին, ամէն, Զալալեանի գիւղը խեղճ եկեղեցու պատկառելի հասակից քսաներկու տարի պակասեցրել է (Խձլ.): Հայրապետ Յակոբը Զուղայեցի Յակոբ Դ. կաթուղիկոսն է, որ մեռաւ Կոստանդնուպօլսում 1129 հայոց թուականի օգոստոսի երկուսին, այն է եկե-

(\*) Քաջբեր, Դպրոց. Գործը շար, Դար, Գաւառում. Արձագանք 1887 № 9  
եւ չոպագրուած շարունակութիւնը.

զեցու շինսւթիւնից մի տարի առաջ՝ բայց նորա մահուան լուրը մի տարի, գուցէ և աւելի, ուշ է հասել Խաչիկ:

Խաչիկեցիք զբաղւում են հողագործութեամբ (ցորեն, գարի և կորեկ) և մասամբ անասնապահութեամբ, Խուրձը կրում են եզների, ձիտնց և էշերի վերայ բարձած։ Կալը կասում են կամնով և ոչ ջարջառով։ Խշանութիւնը մի քսնի անգամ փորձել է ցանել տալ նորանց Ռուսաստանի հատարդյուն, գուցէ Գյելխայ, բայց ապարդիւն։ Սորա տոիթով բազմիցս լսած եմ նորանցից ծիծաղաշարժ պատմութիւններ։

—Պէտք է որ 1850 թուին լինէր, պատմում էր ինձ իւր համագիւղացիների առաջ ուստայ Ուհանը, մովրովը որ Քեշիշքեանդ էր նստում, եասաւուլ ուղարկեց ամէն գիւղ, Էնպէս էլ մեր գիւղը, եթէ վեց համբայ ու մի եաբու ձի վերիենան գան Քեշիշքեանդ սերմ բերելու։ Դէ մովրովի հրամանն էր, ով կարող էր չլսել։ Եաբուն ու վեց համբան գնացին ու կանգնեցին մովրովի առաջ։ Մովրովը նրանց հետ ուղարկել էր տունը երեք գրուանքայ ցորենի պէս մի բան, որ ցանեն և իրան լաւի ու վատի հաշիւ տան։ Ժողովուրդը կասկածի մէջ ընկաւ։ Մինն ասում էր եթէ չցանենք՝ մովրովը կթագի։ Միւսը պընդում էր թէ որ ցանենք, լաւ գուրս գայ, մեր հողերը կտան ռուսներին։ Երբորդը՝ թէ որ ցանենք՝ դրա համար աւելորդ հարկ կառնեն։ Զորբորդը ասում էր թէ ումը լաւ գուրս գայ։ Նորան կտանեն Ռուսէթ ու մուժիկ կշինեն։ Մի խօսքով չցանեցինք, մի կերպով մովրովին էլ շահեցինք որ սուս կենայ, մենք էլ փորձանքից ազատուեցինք։ Զէ, մեր աչքը վախենում է, ծիծաղելով շարունակում էր ուստայ Ուհանը։ 1873 թուին յանկարծ մի լուր աարածուեց թէ բարդի ծառերի վերայ խարջ պէտք է դնեն և թէ Վէդի բասարում ամէն մարդ իւր ծառերը կտրում է որ խարջ չդնեն։ Այդ լուրը սուտ էր թէ ուղորդ, ես չգիտեմ, բայց լսեցին թէ չէ սկսեցին կարտել մեզանում, Մալիշկայում, Այարում և ուրիշ գիւղերում։ . . . . .

«Բա մենք թոնչ ենք հասկանում, սարի ժողովուրդ ենք, աշխարհ չենք տեսել, մարդ չենք տեսել, մեր հեռու տեղը Երեւանն է ու Նախճանը։ Հիմայ էլի լաւ ենք, աչքաբաց ենք,

ծառայողներ են գալի մեր մէջ, վարժապետներ են գալի երեխանցը ուսում տալու, նորանցից բան ենք լսում, բան ենք սովորում: Մի քանի տարի առաջ խելքը գլխին մարդը մեր տէրտէրն էր, որ ինչպէս տեսել ես, մինչն երդմցնելու ժամանակ շուրջառը ինքն է ծածկում, երթմնաթերթը ուրիշին կարդալ տալիս ստորագրելիս էլ ուրիշն է նորա տեղ ստորագրում: ... — Հապա ինչի՞ այդպիսի քահանայ էք ընտրել, միթէ այլ արժանաւոր անձը չկար, հարցրի ես:

— Քու աղբաթը խէր ըլի, ծիծաղելով պատասխանեց Ուհանը. քահանան իո իմ եղբայրս է. մենք էլ գիտէինք որ նորա կարդալը թքով է կպցրած, բայց մի քտնի հոգով նորան վեր առած դնացինք էց միածին և առացինք կամ սորան ձեռնադրէք մեզ վերայ քահանայ կամ թէ չէ ամենքս էլ կթուրքանանք: Ցետոյ, շնորհակալ ենք, ձեռնադրեցին ... Զէ, քեզ ասեմ: ինչքան էլ բռի, կոպիտ մարդիկ լինենք, ամենքս էլ որ միտսին լինենք՝ էլի բան կհասկանանք, բան կշնենք, բան գլուխ կրերենք, նորից շարունակեց Ուհանը. այ, մեր հողերը մուլքից տզատեցինք: Թագաւորական շինեցինք, մուլքագարները ոչինչ չկարողացան անել մեզ:

Միթէ՞ Խոչիկը մուլք է եղել երբ և իցէ, հարցրի ես: Ինչպէս չէ: պատասխանեց Ուհանը. Ռուսների տիրապետութիւնից առաջ մեր գիւղը քիչ էր մնացել Եսյիջեցի թուրք թէգերի ձեռքում մուլք դառնար, մի քանի ժամանակ էլ բահրան տուինք, Ռուսների ժամանակն էլ տուինք, բայց յետոյ դէմ կացանք, հակառակուեցինք, իշխանութիւնը մեր կողմը բռնեց և մեր հողերը շինեցին թագաւորական: Դորա պատմութիւնը սկսպէս է: Եթէ գլխացաւանք Ալինի հրամանոցդ, գիմեց ինձ Ուհանը, ես մի քիչ հեռուից կսկսեմ: Դեռ Պարսից տիրապետութեան ժամանակ Դարալագեազին տիրում էին մի քանի թէգեր: Եայիջում եղել է Նոյն իսկ գիւղացի մի Եռահիմ թէգ, որ կառալարում էր Եսյիջի, Խաչիկ, Առփայ, Զիվայ, Ցանձիկ և Ախուրի գիւղերը: Կառավարիչը ձմեռը կրնակուէր Եայիջումը, իսկ ամառը մեր Խաչիկումը: Դարալագեազի թուրք քնակիչները Հարալառու են: Մի կառավարիչ իւր մարդիկնե-

բով յարձակւում էր միւսի վերայ և կողոպտում էր: Դարա-  
շոռլուն շատ անգամ յարձակուել է Իրահիմ բէգի զիւզերի  
վերայ: Իրահիմ բէգը, բացի գիւղերը կառավարելուց, հաւա-  
քում էր ժողովրդից հարկ Շահին հասցնելու:

Եւր ժողովրդին յարձակումներից ազատ պահելու համար  
նա զանազան գիւղերից մարդիկ բերել տուեց և խաչիկում  
մի բերդ շինել տուեց հիմքը քարից, վերեւը ցեխից, թուանգ  
գցելու տեղեր էլ շինել տուեց: Իերդը մի պարխստի էր մի մեծ  
դռնով: Քառասուն թուականի շարժը քանդեց նորան, հիմքն  
էլ գիւղացիք քանդեցին: Սկզբումը Խաչիկեցիք բերդ շինելուն  
դէմ են եղել, բայց ահն ու վտանգը աչքի առաջ ունենալով  
համաձայնել են: Արդարեւ բերդը կանգնելուց յետոյ՝ Խաչիկի  
ժողովուրդը իւր ապրանքով վտանգի ժամանակ պատսպար-  
ւում էր նորա մէջ: Իրահիմ բէգը իւր արած լաւութեան փո-  
խարէն խնդրեց որ ամէն տարի տանք նորան ձիու գարի (աթ-  
արփասի): Մուլքադարութեան սկիզբը Խաչիկում սաէ: Իրահիմ  
բէգի մահից յետոյ գիւղերի կառավարիչ (սուլթան) եղել է նորա  
մեծ որդի Աբաս Ալին: Նա հօրից առաւել պահանջող եղաւ: Աթ-  
արփասի հետ պահանջեց և ցորեն ՅՈ բաժնից չորսը: Սորա ժա-  
մանակ Շահը կառավարիչ էր նշանակել Վալի խանին, Վրացի  
ծագումով, որ նստում էր Խաչիկում: Վալիխանը թէւ կառա-  
վարչական մասը առաւ իւր ձեռքը, բայց մեր գիւղի մուլքա-  
դարական իրաւունքը մնաց Աբաս Ալի սուլթանի վերայ:

Երկու տարից յետոյ Վալի խանի տեղ նշանակուեց Քեարիմ  
խանը: Նա գեռ Նախիջևանից չեկած, նորա որդին Խայիջի գա-  
լով մարդիկ էր ուղարկել Խաչիկից երկու գառ տանելու, Վա-  
լի խանից Խաչիկում մնացել էին մի քանի վրացի եասաւուլ-  
ներ, որոնք նախանձից վրայ են հասել և գառները իւլել: Քեա-  
րիմ խանի որդին անպատւութիւն համարելով այս անցքը՝ ու-  
ղարկեց Խայիջեցի Պոստալի բէգին որ գոռոզութեամբ իւր մար-  
դիկներով եկաւ Խաչիկ: Խօջայ Ակորը, այն Թաթոսի հայրը որ  
մի ժամանակ իւր աղջկայ հարսանիքում քեզ ասում էր  
Օհան Օձնեցու պատմութիւնը (գլ. Ա.Ա.) դիմեց ինձ Ուհանը,  
Խոջա Ակորը վազեց Դոստալի բէգի ձին բոնելու: Բայց սա շատ

ծեծեց խեղճ Խոջայ Ակոբին։ Անձրեւ պատճառ քերելով՝ ձիանքը կապեց եկեղեցու մէջ, իսկ ինքը իւր մարդիկներով նստեց բեմի վերայ։

Ցայտնի բան է, մեզանից ոչ ոք չէր կարող խօսել նորա դէմ, ահը և երկիւղը այնքան սասատիկ էին, որ Նայիջի կողմից մի ձիաւոր երեւալու ժամանակ տղամարդիկ թոնդիրների և ամբարների մէջ էին թագչում, իսկ կանայք ձորերը և խուլ տեղերն էին փախչում որ ազատուեն ծեծից և անպատճութիւնից . . . Դոստալի բէգը պատահած մարդկերանց թրի բերանով քշեց տարաւ Նայիջի, բայց ողորմած . . . խանը խնայեց և անպատիթ վերտարձրեց . . . Քեարիմ խանը գալով՝ արգեն կառավարում էր ամբողջ Դարալագեազը։

Սորա ժամանակ մուլքադարերը այնքան շատացել էին, որ մի գիւղի վերայ մի քանի մուլքադար միանգամից իրաւունք էին յայտնում։ Աբասալի սուլթանը շարունակում էր մուլք առնել Խաչիկից և երբ սորա օրով Ռուսաց տիրապետութիւնը եկաւ, մուլքը այնուամենայնիւ էլի շարունակում էր։ Այդ ժամանակ երկու կրակի մէջ էինք մնացել, մի կողմից Նայիջեցի մուլքադարը, միւս կողմից Ռուս ամբարդարը մեզ վառում էին։ Առաջինը իւր իրաւունքները լայնացրեց և սկսեց պահանջել մեզանից ցորէն, խոտ, եօնջայ, դարման, մի խօսքով ինչ որ հողից ստացւում է, մինչև անգամ աթար։ Այդ բաւական չէ՝ պահանջում էին որ այդ բերքը մենք տանէինք և յանձնէինք Նայիջում։ Մուլքադարի ծառան (սարքարը—մուլք ժողովսղը) նոյնպէս նեղացնում էր մեզ։ Նա իւր կամքով դրօշմում էր կոլի թեղը, չքամած ցորենը և ինքը գնալով հաց ուտելու կամ քնելու, յաջող քամին փչելու ժամանակ իրաւունք չէր տալի կալը քամելու, մանաւանդ գիշերները՝ երբ միայնակ, անօգնական մարդը պէտք է աշխատէր։ Այս պատճառով սարքեարը շատ անգամ ծեծ էր ուտում։ Սորանից յառաջացաւ մեծ դժողովութիւն ժողովրդի և մուլքադարի մէջ, այն մուլքադարի, որի իրաւունքը խարեբայութեամբ սկսուեց այժմ՝ քանդուած բերդի շինութիւնից, մեր աչքի առաջ։ Ինչ և իցէ 1850 թուականի սկզբում վէճ բայինք մուլքադարի

հետ և դատով գործը տարանք, գիւղը շինեցինը պետական։ Այսպէս էին մուլք դարձել Դարալագեազի մի քանի գիւղեր այս և այն՝ գործի արժէք չունեցող, թուրք բէգերի ձեռքում, որոնք այժմ էլ շարունակւում են տիրապետել ժառանգաբար, շեշտեց ուստայ Ուհանը և շարունակեց թէ Ռուսների տիրապետութեան սկզբում պետական հողերի համար փող չէին առնում ինչպէս այժմ, այլ փողի փոխարէն հողի բերքի 10 բաժնից մինը, այսինքն տասանորդ էին առնում և այս տասանորդը մենք ինքներս պարտական էինք տանել նախիջեանի գաւառութ, Աբասաբատ գիւղը, ուուս ամրագդարին յանձնելու։ Սա էլ պատճառ բերելով թէ ցորենը կամ գարին պակաս է, մաքուր չէ, խոնաւ է և այլ շատ բաներ, ուստի չէր ընդունում և օրերով մեզ չէր արձակում. . . մինչեւ մի քիչ փող ձեռքում դնելով կազառուէինք. . . ։ Այս էլ երկրորդ կրակն էր . . . վերջացրեց ուստայ Ուհանը իւր երկար բացադրութիւնը։

Տասներեք երրորդ դարու Աղաբ գիւղը՝ որ Սմբատ իշխան Սրբելեանը նուիրել էր Ամազուի նորավանքին, պէտք է որ լինէր կամ այժմեան Խաչիկի տեղը, կամ սորանից մէկ վերստ գէպի հիւսիս, Քուռակախաղաց (Ղուլուն օյնաղ) լերան արեմտեան ստորոտում, ինչպէս հաւաստիացնում է մեզ նոյն իշխանի կանխիկ յիշած արձանագրութիւնը, 1261 թուականից։ Խաչիկի շուրջը և հիւսիսային ուղղութեամբ մինչեւ Քարկոփայ վանքը կան գիւղատեղեր, տների փլատակներ, գերեզմաններ, խաչքարեր, ձիթահանքներ։ Զիթահանքի մի մեծ բոլորիկ քար կողքի վերայ գրած է գիւղի հրապարակում, ուսումնաբանի շինութեան առաջ, Միւս ձիթահանքը գիւղից դուրս է և այժմ նարոգած։ Նորա թուղորակ քարը կրում է այս արձանագրութիւնը. «Կուկեցի ուստայ Յոհաննէս նկարագրար. ես Սամոն որդի Յոհաննէսի Տէր Սամուէլի։» Կուկի, այժմ Քիւքի. Երբեմն հայաբնակ, այժմ թրքաբնակ գիւղ է նախիջեանի գաւառում, Կանլի գեօլի մօտ, որից և Քիւքի բառ լեառը։

Խաչիկից հարաւ արեելք, մի և կէս վերստ հեռու գիւղից, Կոտորատար ըլուրի շարունակութեան վերայ կայ փոքր գիւղա-

տեղ իւր եկեղեցու, տների և գերեզմանատան փլատակներով առանց որ և է արձանագրութեան և թուտականի: Խաչիկեցիք անուանում են սորան ՀՅ Գէ-դաբէլ: Կատուաքարից հարաւ, Հաւուշի գետի վերայ, մի որածայր ժայռի գագաթին կայ աւերակ բերդի պարիսպ, ուր գտնում են պղնձէ նետեր, իբրև ապացոյց որ երբէմն այդ տեղ մարդկային արիւն է հոսել . . .: Խաչիկեցիք երբեմնակի անուանում են սորան Հրաշկաբերդ, բայց սխալում են: Բերդի շուրջը և տակի ձորը կրում են Բէշտանաղ կոչումը:

Խաչիկի արեւելեան կողմից իրար վերայ կուտակւում են կանաչածածկ լեռները, որոնց ամենաբարձրը կոչւում է Գետին դայայ, (հարսի ժայռ): Լեռները մասամբ վարելահողեր են, մասամբ արօտատեղեր: Մի ճանապար օձապտոյտներով Խաչիկից բարձրանում է մինչև Գետին դայայ և այն տեղից թեքւում է գէպի Կնիշիկ, Կորադիզ, Օղբին և այլ գիւղեր: Հենց այդ ճանապարհով ուղղուած, Խաչիկից մի վերստաչափ բարձր, ձորի գլխին, հարթ բլուրի վերայ կհանդիպէք մի ծակ քար, որ զտիմանալի ճարտարութեամը բժշկում է Խաչիկեցւոց ցաւոտ ականջները և դորա համար ևս բլրակը իւր ծակ քարով կոչվում է Անկանալս-խաչ:

Նոյն ճանապարհով մի քանի քայլ ևս վեր՝ կհանդիպէք բոլորակ շարուած պատեր, առանց առաստաղի: Առաստաղը նղելէ, բայց մի գիշեր սուրբը ձգել է նորան ներքեւի ձորը, Պատերիներսը, գետնի մէջ ցցուած կայ մի արշին բարձրութեամբ նեղ, անտաշ, կոպիտ, ձէթոտ, ծխոտ և ցխոտ քար, որի ճակատին կացնով փորած է երկու խաչաձև նշան: Սորա շուրջ դարսած են մինչև քսան հատ կաւէ ճրագ: Սա մեծ և նշանաւոր ուժատեղի է Խաչիկեցւոց համար, որոնք կոչում են սորան սովորաբար Ընկարան, երբեմն էլ Հաղաբերէին: Խաչով, աւետարանով երդուիլը խաչիկում այնքան ոյժ չունի՝ որքան ընդհանրացած Ընկարաթով երդուիլը: Նա բժշկում է մարդկանց և անառուների ցաւեր . . . հաւասարապէս: Նըջակայ գիւղօրայքում հանրացաւը կոտորում է անասուններին, բայց Խաչիկում, Ընկարաթի զօրութիւնից, մի գառն անդամ չի սատա-

կում . . . Երբ գարնան վերջին ձիւնը հալւում է և Խաչիկեցիք առաջի անդամ՝ պէտք է անասունները հանեն դաշտ և իւրեանք էլ գնան վարելու, նախապէս անասունները քշում են Ընկղարաթի մօտ, երեք անդամ՝ պտտցնում են նորա շուրջը, մատաղ են մորթում, հաճոյանում են ուխտին և ապա թէ վառահանում են դաշտ գուրս գալ: Որովհետև Ընկղարաթը բժշկում է և անասունների, ուստի խորիմաստ և հանճարաւոր Խաչիկեցիք յիշեալ բառի ծագումը բացատրում են Խաչ զիտրանի, այսինքն կովի ուխտատեղի, որ կրնատ կլինի Ընկղարաթ:

Խւրաքանչիւր տարի, Համբարձման օրը, գիւղի մէջ մնում են միայն զառամեալները, անդամալոյժները և թոյլ հիւանդանները, այն լինչ միւս տղամարդիկ, կանայք, հարսներ, աղջկունք, երեխայք, հովիւ, ձի, եղ, կով, ոչխար, շներ, կատուներ, միով բանիւ Խաչիկու բոլոր շնչաւորները ժողովւում են Ընկղարաթի շուրջը, աղօթում են, զբօսնում են, զուարճանում են և մի քանի տարի առաջ վիճակախաղ էին անում (ջանդիւլում), մատաղ են մորթում: Բոլոր կթէի ոչխարները և կովերը կթում են: Կաթի մի մասը բաժանում են գիւղի աղքատներին, միւս մասից բրինձով կաթնապուռ են եփում, արականների և իգականների համար առանձին սեղան են բանում կանաչ գետնի վերայ, ուտում են և ուրախանում: Նախկին տարիներում այդ օրը մի վայրենի ոչխար էր գալի և պարկում Ընկղարաթի առաջ, Խաչիկեցւոց մնում էր հեշտ ու հասգիստ մորթել և ուտել: Բայց այժմ սուրբը իւր վաղեմի սովորութիւնը թողել է. . . .

Հարցրէք որ Խաչիկեցուն կուզէք, թէ ուր է Ղուլսոն օյնաղ սարը, նա իսկոյն ձեռքը կմէկնի արեւելք՝ դէպի այն բարձր սարը, որ մի լանջով կախւում է Խաչիկու վերայ, միւսով թեքում է այն խորածորը, որ բոլորեքեանք անուանում են Փայա դաշտ (գոմաձոր) կամ Տահրասայ իւրդէ (վարդապետական հող, ամարանոց, բնակարան): Զորի աղքիւրները միանում են, հոսում են վայր, խառնւում են կնիշիկ գիւղի առուակի հետ և ապա խորխորատ ժայռերի միջով իբրև մի առու, գնում է

Ամաղութի տակով, Ուփի ձորով մինչև Արփաջայը։ Վուլուն օյնաղը Սմբատ իշխանի արձանագրութեան մէջ յիշած Քուռակախողացն է, որ այժմ չէ գործածւում։ Հետաքրքիր է թէ հայանունը Ե՞րբ է թուքացել, կամ հնուց ո՞ր լեզուով էր գործածւում։

Վուլուն օյնադ կամ՝ Գուրակախաղաց սնուան ծագման վերաբերութեամբ ընիկները Թւանդաբար հաստատում են թէ Փայոյ գարայ կամ մահրասայի իւրդի նորա համար է կոչւում, որ Ամաղութի նորավանքի վարդապետները ունեին այդ ձորում և ցանք և գոմեր։ Մի անգամ, վարդապետներից մինը մատակ ձիու վերայ նստած՝ հաց էր տանում վանքական գութանաւորների համար և նորան հետեւում էր ձիու քուռակը։ Ղուլուն օյնադ սարի գլխին Նարաղուշը (արծիւը) բարձրացնում է քուռակին և օդի մէջ խաղացնում։ . . . Սորանից ծագել է սարի անունը։ Պատմում են նմանապէս թէ Ամաղուում Բուրթել իշխանի կառուցած տաճարի գմբեթի վերայ, որ այժմ իսկարհուած է, քանդակած էր արծուի և քուռակի տրածանը։

Թէպէտ ճանապարհորդութեանս ուղղութիւնը Խաչիկից դէպի հիւսիս է, սակայն չէ կարելի անտես թողնել Հաւուշ գիւղը, ուր գնալու համար ես պէտք է թեքւուիմ դէպի հարաւարելք։ Կառուաքարի մօտով, սարերի լանջով, ձորերի միջով ես դուրս եկոյ Պատուա-դ ձորը, ուր արդարեւ սառնորակ աղբեւրի շուրջը կան շատ ընկուզքնիք և հաղողի որթն։ Սորանից յետոյ Ուռաս-դ ձորակն է և ապա Հաւուշը, մի թիքաբնակ գիւղ, որ ոչնչով չէ տարբերում իւր նմաններից։

Անշաւշա, սա այն Ա-էւն է, որը Սմբատ Օրբելեանը, 1261 թուականին նուիրեց Ամաղութինորավանքին \*): Սմբատի մահից յետոյ, նորա եղբայր Տարսայինի իշխանութեան օրով, նորավանքի վանահայր Սարգիս Եպիսկոպոսը նոյնպէս նուիրում է այս գիւղը իւր սահմաններով վանքական հիւրատանը, որ կըտեսնենք իւր տեղը և իւր ժամանակը։ ԺԴ. դարու վանքապատկան Աւէշը, Ռուսաց նոր տիրապետութեամն ժամանակ,

(\*) Օրբել պատմ. Նահ Օիս. գլ. Կէ.

մուլքադարական իրաւունքով պատկանում էր, իւր ամէն սահմանով, Եայիջեցի Յուսէին—Ալի սուլթանին, Դոստալիրէ-գին (Խաչիկու եկեղեցում ձի կապող) և Քեազում բէզին, որոնցից այժմեան Հաւուշեցիք գնեցին իւրեանց համար բոլոր զիւղը և հողերի մեծ մասը իրրե սեփականութիւն:

Այս գիւղից 4—5 վերսոտ գէպի հարաւ արեւելք, արձակ կանաչ լեռնագօտու վերայ կայ հայոց հին, այժմ անքնակ, գիւղատեղի Թաճաշալը՝ անունով՝ Թէպէտ առանձնակի և նշանաւոր բան չկայ աւերակների մէջ, սակայն տեղական հայերը և թուրքերը, գուցէ անունից յափշտակուած, պատմում են որ գիւղը այնքան դեղեցիկ է եղել, որ թամաշայ (տեսնելու արժանի) է եղել շրջակայքում։ Սոցա հրճուանքը չափաւորելու համար հաւաստիացնում եմ, որ այդ գիւղը պէտք է լինի Ստեփաննոս Եպիսկոպոս Օրբէլեանի գիւղօրէից ցուցակում յիշած Թաճաշալը, ձահուկ (Զահրի) գաւառում, որից, արդարեայնքան հեռու չէ։ Թամաշալը իւր շրջակայ հողերով պատկանում է Հաւուշեցւոց։

Հաւուշի հիւսիսային եզրում, բարձր ժայռի ստորոտում երեսում է հայոց փոքրիկ եկեղեցու աւերակ հասարակ քարից, ցխամած։ Անտաշ վէմ քարը դեռ ևս ցից կանգնած է սեղանի վերայ։ Արձանագրութեան հետք չկայ։ Նրջակայ գերեզմանաքարերը անտաշ, անարձանագիր և անթուական։ Աւերակները վերջին ժամանակի գործ են։

Սորանցից մօտ 100 քայլ գէպի հիւսիս, կիոաշրջան ձեմի ժայռի ճակատի բազմաթիւ ճեղքերից վազում են յորդաբուղխականակիտ աղբիւրներ, Հայերը կոչում են ժայռը Կղաւուր, իսկ թուրքերը Զրայիանայ (Ճրագատեղի)։ Թուրքերը շատ են յարգում սորան իրրե ուխտատեղի։ Եկեղեցու աւերակները զննելու ժամանակ ինձ շրջապատող հետաքրքիր Հաւուշեցի թուրքերը մինչեւ անգամ կրկնում էին «դա ի՞նչ է, տեսնելու առարկան Զրայիանան է»։ Լաւ, տեսնենք, ասացի։ Գետնի մակերևոյթից խորանում է քարաժայուի մէջ մութ և նեղ այր, որի պատերի ամէն մի կէտից ջուրը կաթկաթելով լճակ է կաղմում յատակում և այրի բերանով հսսում դուրս։ Ուղեկ-

ցող հայերը հաւատացնում էին թէ այրի մէջ կայ ճգնաւորի գերեզման, որից և կախուած է կղաւորի զօրութիւնը . . . :

Նայում եմ՝ այրի բերանը նեղ է, ներսը սասաթիկ խոնաւ, ջուրը անդադար կաթում է: Աչա գերեզմանաքարի ծայրը երեսում է, ցոյց են տալի ինձ ուղեկիցներս: Նարժուած հետաքրքրութիւնից՝ վերնահանդերձս հանեցի և փորեսող մոռայ այրի մէջ: Տասը րոպէ մնալով թէե լաւ թրջուեցայ, բայց հաւատատիցայ որ չկայ ոչ մի գերեզման և գերեզմանաքար և դժուար թէ որ և է ճգնաւոր համաձայնէր բնակուիլ այդպիսի այրում:

Ի՞նչ է նշանակում արգեօք կողուր բառը, որ ես մի քանի տեղ լուծ եմ և այդպիսի տեղեր տեսած եմ: Այս տեղ ջրոտ այրին կղաւոր են ասում, մի այլ տեղ ջրվէժ տեղին պնդյնէս կղաւոր են ասում և այդ տեղերը միմեանցից շատ հեռու են: Ի՞նչ և իցէ:

Հաւուշի կղաւորը ուխտատեղի է Խաչիկու հայ կանանց համար, բայց առաւել ես շրջակայ թուրք կանանց համար, որոնք ուխտի գալով կախում են այդ սրբի առաջ կանգնած թուփ ծոսի ճիւղերի վերայ, ինչպէս ես ականատես եղայ, գոյն զգոյն թելեր, չթի կտորներ, փոքրիկ արախչին, կանացի փոքրիկ հանգերձի բուլոր մասերը, ճօճ և մէջը շորէ երեխայ (յբերք կանանց գրած՝ որպէս զի յշիանան), երկաթէ բեեւներ, փայտի բարակ կտորներ, Քերբարայից բերած կաւէ ըլունների շաբք, և այլ շատ առարկաներ: Այդպիսի ծառը կոչւում է Զընիւ տղոջն (յնցոտածառ): Սոյն ծառը ես տեսել եմ Ղաղախու գաւառում, վկրին և ներքին Բասեններում և այլ տեղեր՝ հայերի և թուրքերի մէջ նրեւում է որ Զընթռ աղաջին ունի հին, կռապաշտական ծագում:

Արդէն կանգնած եմ նախիջևանի գաւառի սահմանում, բայց կվերադառնամ եկած ճանապարհով կրկին Խաչիկ և այն տեղից կուղղուեմ դէպի հիւսիս:

Խացիկից երկու վերտ հեռու, նորա հիւսիսային կողմում, ալեծածան արտերի մէջ երեւում է ահա իւր ժամանակ նշանաւոր, իսկ այժմ թշուառ, աւերտուած Քարիստայ վանքը, որ

հաղար տարի շարունակ նայում է մեզ վերայ, հազար տարի... պետութիւններ են կորնչում կամ կազմակերպւում, ազգեր են սնչետանսւմ կամ յայտնագործւում... հազար տարի....

Հազար տարու պատմութեան մէջ խորասուզուած, երկար ու ձիգ անցեալի տակ ընկնուած՝ ես քայլերս փոխում եմ գէպի Քարկոփ, գէպի տասը անընդհատ դարերի կենդանի վկան... անցնում եմ Ուլահէրէ աղքիւրը, Ղարդայ բաղար կոչուած գիւղատեղին, կարդում եմ կիսով չափ հողի մէջ խրուած խաչքարի արձանագրութիւնը «ի թվիս ԶԼ. (730) Ե. Սարգիս կրօնաւոր կանգնեցի զխաչս ի բարեխօսութիւն ինձ և Դութին . . . . »

Վանքի արևելեան կողմում, Խաչիկեցւոց արտերի մէջ երեւում են շատ քարակոյոներ հին տների աւերակներից մնացած: Գուցէ միաբանութեան կացարաններ լինին...: Նոցա մէջ կոյ և մի ձիթահանք՝ իւր կողքի վերայ գեռ ևս կանգուն բոլորակ քարով: Դէպի հիւսիս՝ ըլուրի լանջի վերայ ընդարձակ գերեզմանատան անարձանագիր տապանաքարերով: Դէպի հարտաջրազատեղի վերայ թափուած են ջրալացի քարէ խողովակածենաւի մեծամեծ կտորները (բաժիները). Թուով հինգ հատ: Այդ խորանարդանման քարերից մինի վերայ կայ այս արձանագրաւթիւնը «Զամենաբարին և զլուսաւորին եկեղեցւոյ զջէր Ստեփաննոս ի բարի յիշեցէք թ. ԶԽԵ» (747): Քարերից մինը Խայիկեցիք տարել են իւրեանց Շոք առնիւէն համար նաւշինելու:

Զրազացը իւր ջուրը ստանալիս է եղել այժմեան Շաղան առուակից և քարհիղներից, որոնց հետքերը կան և այժմ; Քեահրիզը ստորերկրեայ ջրանցք է, հեռու տեղից ջուր հանելու և բերելու: Քեահրիզի սահմանում երկու բարձր պատուանդանի վերայ մի ևս առաւել բարձր կանգուն խաչքար դժուար ծանելի արձանագրութեամբ՝ կոչվում է Պոքտառը խաչ, ըստ որում յետեի երեսում ունի ուռուցիկ մասը պորույնման: Խայիկեցիք կոչում են սորան և Սասմէ խաչ, այսինքն ցասման խաչ, ըստորում կայծակի, մորեխի, մկան և այլ այդ պիսի հասարակաց թշուառութիւնների առաջն առնում է..

Վանքից տասը քայլ հարաւ կիսով չափ հողում ծածկուած տապանուքարերի շարքում մինը կրում է հետեւեալ գրութիւնը . Այս է պապան Մկրախ կուսակրան սրբազն քահանային . յիշեցէք ի Քրիստոս . թվ. ԶՀԲ. (772) :

Վանքի տակը կարելի է հաշուել մինչև երեսունեհինգ սենեակների աւերակներ : Ահա այն բոլորը, ինչ որ կարելի է տեսնել Քարկոփի շրջակայքումը : Այժմ մօտենանք վանքին :

(Ետքունակէլ)

ՔԱԶԲԵՐՈՒՆԻ.

## ԱԶԳԱՅԻՆ

Ամսոյս 25ին նորին Օծութիւն Վեհափառ Հայրապետն ազգիս առաւեօտեան Դ ժամին իւր աղօթքը Հառիճոյ վանքի Ստաճարում կատարելից յետ, ուղեկցում է գէպի Ա. Աթոռը : Ներաէս և Արիստակէս Արբազաններն որոնք 23ին Ա. Աթոռից գնացել էին Հառիճ, ուղեկցում են նորին Օծութեան : Նորին Օծութեան ուղեկցում են Հառիճից և Արքադ քահանայ Յովսէփի Կոստանեանց, հայր Մարտիրոս Տէր Պօղսեանց, ինչպէս և այլ բազմաթիւ գիւղական եկեղեցականք ու Հառիճոյ ընկերութեան անդամ մեծ . Պ. Յարսւթիւնեանց, Շիրակայ գաւառապետի օգնականն և այլ պաշտօնատար անանձնք : Արք. Հայր Յովսէփի Կոստանեանցն որ նորին Օծութեան Հառիճում ընդունելու և ճաշկերպիթ պատրաստելու ժամանակ գլխաւոր կարգադրիչ եղած էր, իւր եկեղեցականներով մինչև Բաշ - Ապարան ուղեկցելուց յետ Վեհափառ Հօր օրհնութիւնն առնելով վերադառնում է :

Նորին Օծութիւնը Բաշ - Ապարանում մի քանի ժամ՝ հանգստանալից յետ շարունակում է իւր ճանապարհը մինչև Նարքիլիս գիւղն, ուր և գիշերում է : Ապարանից ուղեկցում է նորին Օծութեան Էջմիածնայ Գաւառապետ Մեծ . Պ. Ֆ. Թ. Խան - Ազեանցն, որ երկու օր առաջ գնացել էր ընդառաջ